«Հաստատում եմ»

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային

կենտրոնի տնօրեն

Ա. Սարգսյան

---

25. 12. 2023

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության կողմից

Սաթենիկ Հովհաննեսի Դանիելյանի

«ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ

ՍԵՌԱՅԻՆ ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

թեմայով ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ

հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ատենախոսության վերաբերյալ

Անձի զարգացման փուլերի հոլովույթում դեռահասության տարիքային շրջափուլը բնորոշվում է հակասականությամբ, կոնֆլիկտներով ու վարքային նորագոյացություններով: Այսօր լուրջ և ահազնացող վտանգ են ներկայացնում՝ դեռահասության տարիքային շրջափուլում դրսևորվող հոգեախտաբանական համախտանիշները, սեռադերային վարքի շեղումները, որոնք նույնիսկ դիտարկվում են հարաբերական նորմայի շրջանակներում: Ու, թեպետ դեռահասության տարիքային շրջափուլի վերաբերյալ առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ, այնուամենայնիվ դեռևս շատ ու շատ հարցեր կարոտ են լուսաբանման ու նորովի մեկնաբանման՝ կապված հասարակական կյանքի

արագընթաց տեմպի, հանրության ինտեգրացիոն ու գլոբալիզացիոն տարաբնույթ գործընթացների, տարատեսակ նորագոյացությունների հանրային կյանք փոխներթափանցումների հետ, որոնց արդյունքում, անձի զարգացման մի շարք կողմերի հետ զուգընթաց նաև փոփոխությունների, աղճատումների ու հաճախ նաև աղավաղումների է ենթարկվում դեռահասի հուզակամային ու վարքային ոլորտները: Եվ, եթե դեռահասության տարիքային շրջափուլին բնորոշ դժվարություններին հավելվում է նաև արտաքին գործոնների նմանատիպ ազդեցությունները՝ ապա պատկերն առավել ակնառու է դառնում: Հարկ է նշել նաև, որ բավականաչափ թույլ է ուսումնասիրված դեռահասների տարիքային ճգնաժամերից բխող վարքաձևերի պատճառահետևանքային կապերը, ինքնահաստատման դեռադերային առանձնահատկությունների համատեքստում:

Նման իրավիճակում հոգեբանական հետազոտության առաջնահերթ խնդիրներից է վերլուծել, իմաստավորել ու գնահատել առաջադրված խնդրի հոգեբանական առանձնահատկությունները, վեր հանել դեռահասության տարիքային շրջափուլին բնորոշ ճգնաժամերի և սեռային ինքնահաստատման խնդիրները, գտնել համապարփակ և արդյունավետ հաղթահարման մեխանիզմներ, նախականխման և տարիքին բնորոշ բացասական պոտենցյալի մարման ուղիներ:

Դեռահասության ճգնաժամի բազմաթիվ հետազոտություններ են իրականացվել, սակայն այս ճգնաժամի և դրա դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրությունն անձի ինքնահաստատման առանձնահատկությունների տեսանկյունից հնարավորություն կտա ամբողջական ու լիարժեք պատկերացում կազմել դեռահասության ճգնաժամի դրսևորումների և դրանք պայմանավորող գործոնների պատճառահետևանքային կապերի մասին:

Ներկայացված հիմնախնդրի այս կողմերի բացահայտմանը, վերհանմանն ու լուսաբանմանն է միտված իրականացված սույն հետազոտությունը, որի նպատակն է եղել, մասնավորապես՝ պարզել սեռային ինքնահաստատման գործընթացի դերը դեռահասության ճգնաժամի առաջացման գործընթացում՝ իբրև

օբյեկտ դիտարկելով դեռահասության ճգնաժամը, իսկ առարկա՝ սեռային ինքնահաստատման դերը դեռահասության ճգնաժամի առաջացման գործում:

Ատենախոսի կողմից առաջադրված վարկածը նոր գաղափար ու հիմնախնդրին նորովի մոտեցում է ամփոփում, այն է. դեռահասության ճգնաժամը մեծապես պայմանավորված է ինքնահաստատման, հատկապես սեռային ինքնահաստատման գործընթացի առանձնահատկություններով՝ դժվարություններով, ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիայով և միաժամանակ մանրամասնում գործընթացի էությունը և բնորոշ հոգեբանական վիճակներն ու գործընթացները:

Մասնավորապես այն, որ դեռահասի սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացվածության դեպքերին բնորոշ է դեռահասության տարիքային շրջափուլի և զարգացման ճգնաժամի սուր ընթացքը:

Մասնագիտական հետաքրքրություն է ներկայացնում այն ենթավարկածը, որ դեռահասության ճգնաժամի սուր ընթացքին ավելի բնորոշ է դեստրուկտիվ տիպի ինքնահաստատումը. ընդ որում, դեստրուկտիվ ինքնահաստատումը բնորոշ է ճգնաժամի ագրեսիվ դրսևորմանը, իսկ հրաժարումն ինքնահաստատումից՝ պասիվ, տագնապային դրսևորմանը: Ատենախոսը ուշադրությունը սևեռում է շատ հետաքրքիր մի կանխադրույթի վրա, այն է. ճգնաժամի թեթև ընթացքին ավելի բնորոշ է կոնստրուկտիվ տիպի ինքնահաստատումը, միջին ընթացքին՝ և՛ կոնստրուկտիվ և՛ դեստրուկտիվ տեսակները:

Բավականաչափ տրամաբանական ընթացքով իրականացված հետազոտության արդյունքում ուսումնասիրվել է հոգեբանական մասնագիտական գրականության մեջ դեռահասության ճգնաժամի դրսևորումներին, ճգնաժամի և անձի սեռադերային ինքնահաստատման առանձնահատկություններին առնչվող տեսությունները, գիտական մոտեցումներն ու հայեցակարգերը, կատարել վերջիններիս համապարփակ վերլուծություն և համակարգում: Իրականացված փորձարարական հետազոտության արդյունքում նոր լույս է սփռվել դեռահասության ճգնաժամի դրսևորումների, ընթացքի, առանձնահատկությունների, սրության երևույթների վրա և դրա հիման վրա

դասակարգվել դեռահասներին՝ ըստ ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների: Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում փորձարարական հետազոտության արդյունքում վերհանված դեռահասների ինքնահաստատման առանձնահատկությունները, սեռային ինքնահաստատվածության մակարդակները և ֆրուստրացվածությունը:

Իրականացված էմպիրիկ հետազոտությունների արդյունքների քանակական, որակական և համեմատական վերլուծության հիման վրա ատենախոսը պարզել է, որ դեռահասների ինքնահաստատվածության, մասնավորապես սեռային ինքնահաստատվածության մակարդակը, այդ պահանջմունքի ֆրուստրացիան ազդում են դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա:

Ուսումնասիրության հիմքում դնելով զարգացման, դետերմինիզմի և համակարգայնության սկզբունքները՝ հեղինակը դեռահասության ճգնաժամը դիտարկել է իբրև պոլիդետերմինիստական երևույթ, որպես հիերարխիկ համակարգ, որի մեջ կարելի է առանձնացնել օղակների փոխպայմանավորված պատճառական շղթա:

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել Զ. և Ա. Ֆրոյդների՝ անձի և զարգացման հոգեվերլուծական տեսությունները, Փ. Բլոսի, Է. Էրիքսոնի, Լ. Վիգոտսկու, Դ. Էլկոնինի, Հ. Ռեմշմիդտի, Լ. Բոժովիչի, Ս. Խուդոյանի անձի զարգացման և դեռահասության ճգնաժամի հայեցակարգերը: Հետազոտության տեսական հիմքերից ենք համարում նաև ֆրուստրացվածության մակարդակների գաղափարը (Կ. Ուրազան, Ս. Խուդոյան), ըստ որի, պահանջմունքի անբավարարվածությունը, նպատակին հասնելու խոչընդոտները մի որոշակի մակարդակից հանգեցնում են ֆրուստրացվածության վիճակի և որոշակի մակարդակում հանգեցնում ճգնաժամի:

Ատենախոսի կողմից ընտրվել է բավականին հուսալի մեթոդական ապարատ՝ կիրառելով զրույցի, Ս. Խուդոյանի՝ դեռահասության ճգնաժամի սրության և ինքնահաստատվածության մակարդակի հետազոտության հարցարանը, Լ. Ի. Վասերմանի՝ սոցիալական ֆրուստրացվածության հետազոտման էքսպրես մեթոդիկայի մոդիֆիկացված տարբերակը, Ե. Ա. Կիրենայի և Տ. Դ.

Դուբովիցկայայի՝ դեռահասության ինքնահաստատման առանձնահատկությունների հետազոտման մոդիֆիկացված հարցարանը, Մ. Լյուշերի՝ ութ գունային թեստը, ինքնանկարի, ընկերների, ընտանիքի անդամների նկարների մեթոդիկաները:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հուսալիությունն ապահովվել է ճշգրիտ մեթոդաբանական սկզբունքների և հետազոտական մեթոդների համախմբի ընտրությամբ, տեսամեթոդական հիմքերի ներգրավմամբ, կիրառված էմպիրիկ մեթոդների բազմազանությամբ, մեծ քանակությամբ հետազոտվողների ընդգրկմամբ, հետազոտության արդյունքների քանակական և որակական վերլուծությամբ:

Գիտական արժեք է ներկայացնում էմպիրիկորեն վերհանած ու լուսաբանած գիտական այն հիմնավորումը, որ սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան կարևոր դեր է խաղում դեռահասության ճգնաժամի առաջացման և ընթացքի առանձնահատկությունների գործում: Նորովի մոտեցում է հիմնախնդրին այն դրույթը, որ դեռահասության ճգնաժամը բնորոշվում է դրսևորման տարատեսակներով, այն է՝ պասիվությամբ, դեպրեսիայով, տագնապներով և ագրեսիվ վարքով: Գիտական նորույթ է նաև այն բացահայտումն ու վերհանումը, որ սուր ճգնաժամի դեպքում դեռահասները նախընտրում են ինքնահաստատման դեստրուկտիվ ոճը, մեղմ ընթացքի դեպքում՝ կոնստրուկտիվ, միջին ընթացքի դեպքում՝ դեստրուկտիվ և կոնստրուկտիվ ինքնահաստատման ոճերը գրեթե հավասար են:

Լայնածավալ հետազոտական աշխատանքների արդյունքում, որոնց վերջնարդյունքները, կապված հետազոտությանը համարժեք ընտրված մեթոդիկաների հետ, բնորոշվում են հավաստիությամբ, հնարավորություն են ընձեռել ատենախոսին հանգել այն եզրակացությանը, որ նախ՝ դեռահասության ճգնաժամը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից մեկն ինքնահաստատման (սեռային ինքնահաստատման) պահանջմունքի ֆրուստրացիան է: Ընդ որում՝ սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացվածության դեպքերին բնորոշ է նախևառաջ դեռահասության տարիքի

զարգացման ճգնաժամի սուր ընթացքը, ապա՝ այն, որ դեռահասության տարիքում ինքնահաստատումը վերաբերում է սեռադերային ոլորտին և առավել ակտուալ է դեռահասի ինքնահաստատումը իբրև տղամարդ/կին:

Հետազոտությունների արդյունքների վերլուծությունը թույլ է տվել ատենախոսին հիմնավորել այն կանխադրույթը, որ դեռահասության շրջանում սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացվածության արդյունքում այս տարիքի ճգնաժամի դրսևորման երկու տեսակ կարելի է առանձնացնել՝ տագնապներով, ասթենիկ, դեպրեսիվ վիճակներով և ագրեսիվ վարքով:

Սույն ատենախոսությունը ավարտուն և ամբողջական աշխատանք է: Ատենախոսության գլուխներն ու ենթագլուխները կապված են միմյանց փոխլրացնող ու տրամաբանական կապով: Լայնածավալ հետազոտության արդյունքում ատենախոսի կողմից ներկայացվել են կուռ և ամբողջական եզրակացություններ:

Այնուամենայնիվ, ատենախոսության մեջ առկա են խնդրահարույց հարցեր:

Մասնավորապես՝

1. Ատենախոսական հետազոտության ընտրանքի սեռային համամասնությունն ընդհանուր առմամբ պահպանված է (ինչպես հետազոտվողների ընդհանուր թվի դեպքում 11-16 տարեկան 178 դեռահասներ (84 տղա և 94 աղջիկ), այնպես էլ հետազոտվողների հիմնական թվաքանակի դեպքում՝ 118 դեռահաս՝ 64 աղջիկ, 54 տղա): Սակայն ատենախոսության հետազոտական տվյալների մեջ դեռահասության ճգնաժամի կամ սեռային ինքնահաստատման համատեքստում, գրեթե ներկայացված չեն սեռային առանձնահատկություններն ապացուցող տվյալներ:

2. Հետազոտության ընտրանքն են կազմել Վրաստանում ապրող տարբեր էթնիկական պատկանելության դեռահասներ, մինչդեռ հետազոտության արդյունքների վերլուծության մեջ բացակայում են վերլուծություններն ընտրանքի տվյալ ենթախմբերի տեսանկյունից:

3. Ատենախոսության հիմքում դրված է սեռային ինքնահաստատման գաղափարը, մինչդեռ աշխատանքում բացակայում է նշյալ եզրույթների խորքային վերլուծությունը, վերջինիս բուն հոգեբանական էության ու դրսևորումների վերհանումը:

4. Ատենախոսության համար հիմնարար, առանցքային կարևորության գաղափարներ են Կ. Ֆ. Ուրազանի և Ս. Ս. Խուդոյանի «Ֆրուստրացվածության աստիճանի, մակարդակների», ինչպես նաև «Ֆրուստրացիայի շեմի» գաղափարները: Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսն առավել մանրակրկիտ վերլուծության ենթարկեր տվյալ հասկացությունների էությունն ու նշանակությունը՝ վերջիններս կապելով առաջադրված հիմնախնդիրների հետ:

Այն էական ներդրում է հոգեբանական գիտակարգում և կարելի է եզրակացնել, որ Սաթենիկ Հովհաննեսի Դանիելյանի «Դեռահասության ճգնաժամը և սեռային ինքնահաստատման առանձնահատկությունները» թեմայով ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է:

Հաշվի առնելով թեմայի այժմեականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, գիտական հավաստիությունը, եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Սաթենիկ Հովհաննեսի Դանիելյանի «Դեռահասության ճգնաժամը և սեռային ինքնահաստատման առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը համարել ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին համապատասխան, այսինքն՝ սոցիալական հոգեբանության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում, իսկ Սաթենիկ Հովհաննեսի Դանիելյանին շնորհել հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ:

Աշխատանքի վերաբերյալ կարծիքը և եզրակացությունները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնի 22. դեկտեմբերի, 2023թ.12/23 նիստում:

Քննարկմանը մասնակցում էին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նաիրա Հակոբյանը, հոգեբանական գիտությունների դոկտոր Ռուբեն Նաղդյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վազգեն Պողոսյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիաննա Ավետիսյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիամ Մեհրաբյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Անժելիկա Այվազյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Աննա Խաչատրյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արա Ֆիրյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գոռ Եսայանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Մուրադյանը:

Ամբիոնի վարիչ՝ Ն. Հակոբյան

Ամբիոնի վարիչ Նաիրա Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտքարտուղար՝ Մ. Սարգսյան